

Հաստատված է
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
„20„ „05„ 2015թ
թիվ 49 որոշմամբ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն

ք. Եղեգնաձոր 19 05 2015թ

Մարզի տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության մրցույթի անցկացման հանձնաժողովի 2015թ. մայիսի 19-ի նիստի.

- Նիստի նախագահող՝ հանձնաժողովի նախագահ - Խ. Ասլանյան
- Հանձնաժողովի նախագահի տեղակալ - Ռ. Մինանյան
- Քարտուղար՝ հանձնաժողովի անդամ - Հ. Կարապետյան

Նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամներ՝ Կ. Այվազյանը, Վ. Պողոսյանը, Ս. Արզումանյանը և Կ. Ամարյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ. - Մարզի տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության մրցույթում հաղթող ճանաչելու մասին:

Նիստը բացեց հանձնաժողովի նախագահ Խ. Ասլանյանը:
Մրցույթի մասնակցության հայտ են ներկայացրել Եղեգնաձորի „ՎԱՍ„ ՍՊԸ-ն և անհատ ձեռնարկատեր Վ. Խաչատրյանը:
Առաջինը բացվեց „ՎԱՍ„ ՍՊԸ-ի փաթեթը, որում ներկայացված էր մրցույթի համար պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը և նշված երթուղիների գնացուցակը, որը մատչելի էր:
Հաջորդը բացվեց անհատ ձեռնարկատեր Վ. Խաչատրյանի փաթեթը, որում ներկայացված փաստաթղթերը համապատասխանում էին պահանջվող տվյալներին և նշված երթուղու ուղեվարձը, որը նույնպես մատչելի էր:
Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրություններից պարզվեց, որ մրցույթին ներկայացված ավտոբուսների և միկրոավտոբուսների տեխնիկական վիճակը բնութագրող ցուցանիշները ,ուղևորասրահը և արտաքին տեսքը գտնվում են բավարար վիճակում:

Մրցութային թերթիկների արդյունքների հիման վրա կազմվեց ամփոփ մրցութային թերթիկ ,որի արդյունքում պարզվեց, որ մրցութին ներկայացված բոլոր ավտոբուսները հավաքել են 70-ից բարձր միավորներ, իսկ միկրոավտոբուսները հավաքել են նույնպես 70-ից բարձր միավորներ:

Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը գտնում է, որ ուսումնասիրված միկրոավտոբուսները և ավտոբուսները կարող են ներգրավվել ուղևորափոխադրումների գործընթացում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման պահանջները

Հանձնաժողովը որոշում է

1. Եղեգնաձոր – Մալիշկա , Եղեգնաձոր – Վերնաշեն ավտոբուսային ներմարզային երթուղիները հատկացնել Եղեգնաձորի „ՎԱՄ„ ՍՊԸ -ին 4/ չորս / տարի ժամանակով այն սպասարկելու համար, իսկ Եղեգնաձոր - Աղնջաձոր , Եղեգնաձոր - Վարդահովիտ, Եղեգնաձոր – Աղավնաձոր և Եղեգնաձոր – Ելփին միկրոավտոբուսային ներմարզային երթուղիները հատկացնել Եղեգնաձորի „ՎԱՄ„ ՍՊԸ -ին 3 / երեք / տարի ժամանակով:

<i>Տրանսպորտային միջոցի</i>						
<i>№</i>	<i>երթուղու անվանումը և համարը</i>	<i>մակնիշը</i>	<i>հ/հ</i>	<i>դ/հ</i>	<i>թ/տ</i>	<i>վարորդի անունը, ազգանունը</i>
1.	Եղեգնաձոր – ԱղնջաձորN1	ԳԱԶ-322132	662 LU 18	2903 L	2005	Հովսեփյան Արման
2.	Եղեգնաձոր – ԱղնջաձորN1պահ.	ԳԱԶ-322132-418	13LL641	2184 L	2007	Զաքարյան Արթուր
3.	Եղեգնաձոր – ՎարդահովիտN2	ԳԱԶ-32213	431OR61		2005	Սահակյան Կարեն
4.	Եղեգնաձոր – ՎարդահովիտN2 պահ.	ԳԱԶ-322132-418	13LL641	2184 L	2007	Զաքարյան Արթուր
5.	Եղեգնաձոր – Մալիշկա N16	Պազ-672U	523 LU 18	1087 L	1989	Մկրտչյան Մուկուչ
6.	Եղեգնաձոր – Մալիշկա N16 պահ.	Պազ-672U	574 L U18	2185 L	1985	Մկրտչյան Մաթևոս
7.	Եղեգնաձոր – Վերնաշեն N15	Պազ-672U	524 L U18	2176 L	1989	Գասպարյան Ռազմիկ
8.	Եղեգնաձոր – Վերնաշեն N15 պահ.	Պազ-672U	574 L U18	2185 L	1985	Մկրտչյան Մաթևոս
9.	Եղեգնաձոր – ԱղավնաձորN10	Ֆորդ	432OR61		2006	Շահինյան Դերենիկ
10.	Եղեգնաձոր – ԱղավնաձորN10պահ.	ԳԱԶ-322132-418	13LL641	2184 L	2007	Զաքարյան Արթուր
11.	Եղեգնաձոր – ԵլփինN5	ԳԱԶ-322132	616 L U18	2909 L	2006	Կարապետյան Սաշիկ
12.	Եղեգնաձոր – Ելփին N5պահ.	ԳԱԶ-322132-418	13LL641	2184 L	2007	Զաքարյան Արթուր

Երթուղիների ուղևորափոխադրավարձը սահմանել համաձայն կազմակերպության կողմից ներկայացված առաջարկի

Եղեգնաձոր- Վարդահովիտ 450 դրամ

Եղեգնաձոր - Աղնջաձոր 300 դրամ

Եղեգնաձոր - Վերնաշեն 100 դրամ
 Եղեգնաձոր-Աղավնաձոր 300 դրամ
 Եղեգնաձոր-Ելփին 400 դրամ

2. Վայք - Եղեգնաձոր ներմարզային միկրոավտոբուսային երթուղին հասկացնել անհատ ձեռնարկատեր Վրույր Խաչատրյանին 4 / չորս / տարի ժամանակով նշված երթուղու ուղևորափոխադրումը կազմակերպելու համար:

Տրանսպորտային միջոցի						
№	երթուղու անվանումը և համարը	մակնիշը	հ/հ	դ/հ	թ/տ	վարորդի անունը, ազգանունը
1.	Վայք - Եղեգնաձոր N30	ԳԱԶ-322132-418	25 US 025		2007	Խաչատրյան Արտավազ
2.	Վայք - Եղեգնաձոր N30 պահ.	ԳԱԶ-322132-220	26 LS 526	1080L	2006	Խաչատրյան Վրույր

Երթուղու ուղևորափոխադրավարձ սահմանել համաձայն անհատ ձեռնարկատեր Վ. Խաչատրյանի կողմից ներկայացված առաջարկի:








Վայք - Եղեգնաձոր 200 դրամ

Հանձնաժողովի նախագահ՝

Տեղակալ՝

Քարտուղար՝

Անդամներ՝

 Խ. Աղայան
 Ռ. Մինայան
 Հ. Կարապետյան
 Վ. Այվազյան
 Վ. Պողոսյան
 Ս. Արգումանյան
 Ի. Ամարյան